

ոչ ալ ուր տեղ ընդօրինակուած ըլլալը
յայտնի է:

Այսու հանդերձ՝ ես հիանալով կը հիա-
նամ այս ձեռագրին վրայ, և կը խոկամ
ըսելով, թէ ինչ երկիւղած յարգանք ունին
եղեր մեր նախնիք զէպ ի Ամիրտովաթ
Ամասիացին, ինչ պաշտում անոր աշխա-
տութիւններու մասին, որ այսպէս անոնց
բազմակերպ ընդօրինակութիւններն ըրած
են զանազան թուականներու, այլեւայլ
քաղաքներու մէջ. 15րդ դարու զաւակ
Ամասիացի այս բժիշկը որչափ ժողովրդ-
դականութիւն և բարի համբաւ վայելած
էր ուրեմն:

Արդէն տեսած և ուսումնասիրած օրի-
նակներուս վրայ Ս. Ղազարու Մատենա-
դարանին ունեցածներն ալ բարդելով՝ կը
տեսնեմ որ Ամիրտովաթի թէ՛ Օգոստ
բժշկութեան, և Անգիտաց Անպատին ու թէ՛
Ախրապատիներն օրինակները կը հասնին
բաւական պատկանելի թիւի մը. երբ ար-
դեօք կարելի պիտի ըլլայ ասոնց բոլորին
բաղդատութիւնն ընել, կատարեալ և ան-
սխալ ընդօրինակութիւն մէջտեղ հանելու
համար. որ համբերատար ձեռքը պիտի
յօժարի այդպիսի մեծ և հոյակապ աշխա-
տութեան մը հեղինակը հանդիսանալ և
Հայ բժշկական պատմութեան մէջ անմահ
անուն ժառանգել:

ՏՕԲԹ. ՎԱՐԱՄ Բ. ԹՈՐՈՍՄԵԱՆ

Վենետիկ — Ս. Ղազար

24 Դեկտեմբեր 1922

(Շարունմակելի)

1704ին շինուեցաւ շոգիի առաջին մեքենան.
Ֆիլիպին 1803ին յարմարացուց իր նաւակին.
1827ին Սգէֆէնսըն գտաւ տեղաշարժը (loco-
motive):

○

Պրատնիկ՝ իր անուամբ կոչուող ատրճանա-
կին հեղինակը՝ շինած է թնդանօթ մը՝ որ կրնայ
մէկ վայրկենի մէջ նետել 120 հարուած:

ՀՆՈՒՅՈՒՄԵԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՔՈՎ

(Շար. տես Բազմավէպ 1923 էջ 262)

ՄԱՐՄԵԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԿՐՈՏԱԿԱՆ ՈՒ ՄՏԱԽՈՐ զաստիարա-
կութեան զուգընթաց և անոնց հաւասար,
և մանաւանդ յաճախ աւելի խնամք վա-
յելիք է պատանւոյն կողմանէ՝ «մարմնոյ
կրթութիւնը»¹: Ասոր մէջ կը մտնէր շար-
ժումն ու զուարճութիւն, որ աւելի հրա-
պուրէչ կ'ընծայէին զայն մատաղ հասա-
կին, քան նստողական դրութեամբ ստա-
նալի մտաւոր կրթութիւնը: Առաւելապէս
մեր ազատաց զրօսասիրութիւնն ընդար-
ձակած էր խաղերու կարճատեւութիւնը թէ՛
իրենց և թէ՛ զաւակաց համար: Եթէ Հա-
յաստանի պեղումներն ունենային և կա-
րենային տալ մեզ նկարչութեան ու քան-
դակագործութեան զանձերէն՝ զորս շոյա-
լօրէն կ'ընծայեն հեւլէն եւ հողմական
աւրուեստները, անոնց վրայ պիտի տես-
նէինք՝ մեր չափով՝ հին Հայոց զրօսական
ու մարզական խաղերը, որոց մասին մեր
մատենագրութիւնն ալ շատ ժլատ է դժ-
բախտաբար: Հազիւ անոնց անունները
կու տայ մեզ չափով մը. իսկ նկարա-
գրութիւն՝ գրեթէ ոչ, և զոր մեք իսկ
ստիպուած ենք ստեղծել:

Եւ արդարեւ մեր հարց եւ ունեցած են
և իրենց որդւոց կրթութեան մասն ըրած՝
պէսպէս խաղերը, զորս հետազօտութեան
ներած չափով պիտի տեսնենք հոս յա-
ջորդարար, և զորս խաղացողաց հասակի
և ախրժակի զանազանութեան համեմատ՝
պիտի բաժնեմ երեք դասակարգի, յատուկ
տղայոց, մականց և պատանեկաց կամ պա-

1. Ս. Տիմոթ. Գ, Ի,

տանհաց, ինչպէս կը սահմանեմ ես մատաղ հասակին երբեակ շրջանները՝ դասական լեզուի այդ բառերով. թէ և հին բարբառը միածն ու հաստատուն նշանակութիւն չի տար միշտ այդ բառերուն, ինչպէս կը նշմարեն ընթերցողը նաև աշխատութեանս ընթացքին մէջ, և հոմանշաբար կը զոր-ծածէ իրարու տեղ: Միք սակայն պէտք չունինք այդպիսի ճշդութեան մը, քաջ չգիտնալով մեր փորձով թէ ըստ հասակին ի՞նչ խաղերու հակամէտ է ի բնէ մարդս՝ իւր կենաց դալար տարիներուն մէջ:

ԳԼՈՒԽ Ա

Պ Ա Խ Ա Ճ Ճ Ա Մ Ք

Տղային՝ երկու տեղի ևս՝ շարժելու և խաղալու բնազդը կը սկսի որոցէն, ուր կ'ախորժի իւր ձեռքին հանդիպած իրը սեղմել թաթիկներուն մէջ ու բերանին մօտեցնել: Անոր առաջին մարզանքն է այդ: Յետոյ ծնողը նախկին կամ տղայութեան տարիներուն մէջ անոր ձեռքը կու տան խաղալիկներ, որ առիթ կ'ընծայեն անոր՝ շարժման մէջ դնելու և զօրացնելու նուրարոյս անդամները: Այսպէս վարուել է մարդկութիւնն ամէն ժամանակ իւր աղածրի տղայոց հետ, այսպէս պիտի վարուէր նաև Հայաստան:

Ոսկերեւանի թարգմանութեան մէջ այս մասին կը հանդիպինք հետեւեալ կարևոր վկայութեան, զոր կանխաւ ալ տեսանք. «Զոր օրինակ մանկաւոյ պղակունդս և պախաձաձամ գնեմք և արծաթով պատրեմք, և զմին միայն պահանջեմք՝ զի ի դպրոցն երթայցեն՝»:

Յոյն բնագրին մէջ կը պակասի « և պախաձաձամ» բառից համազօրը, և յայտնի է թէ յաւելուած է թարգմանչէն, հայ բարբերէն իսկ առնելով. 'Նկատելի է՝ որ

պախաձաձամք յարակից պղակունդին պէս կը տրուին այնպիսի մանկանց, որոնք թէ և արդէն դպրոց կ'երթան, բայց շատ մանր են՝ կարկանդակով խաբուելու աստիճան. «պատրեմք», կ'ըսէ:

Մոյն նպատակին կը ծառայեն հայ մանկաւոյն համար՝ պախաձաձամքն ալ, որ որկորի վայելքէն վերջ՝ երկրորդ հրապուրիչ բան մը լինելու է մանկութեան. և զոր շատ զիրին է մեզ գուշակել, երբ խորհինք՝ թէ ամէն դարերու և ազգերու մէջ այդ հասակին համար ցանկալին՝ խաղալիկներն եղած են: Ասոնք էին ուրեմն մեր «պախաձաձամքը»: Ի հաստատութիւն այս մեկութեանս՝ այդ բառին մէջ կրնանք նշմարել պարսկերէն պախ արմատը, որ կը նշանակէ գեղեցկութիւն, և թուրքերէն՝ գուցէ պարսկածին՝ շիճի, որ է խաղալիկ, քան թէ պրս. ձուձեմը՝ որ է պտղաբեր ոստ:

Այդ պախաձաձամք դրսէն կը զնոյն, զգացնելով մեզ՝ թէ մանկական խաղալիկներու յատուկ ճարտարարուեստը կար Հայաստանի մէջ ալ: Միանգամայն վկայութեանդ յոգնականն ձեռն կը հասկանանք՝ որ «պախաձաձամք» այդպիսի խաղալիկներու ընդհանուր կոչումն էր, և ոչ ուրոյն խաղ մը:

Ինչ տեսակ խաղալիկներ էին աղոնք, յայտնի բան մ'ըսուած չէ հոգ և կամ ուրիշ հայ մատենագրերէ: Բայց զիրին է խորհիլ՝ որ հեռի լինելու չեն անոցմէ՝ զոր արդի և ամէն դարերու մանուկները փնդոբ են. այսինքն զիրենք շրջապատող և իրենց ընտանի ձեներն իսկ, արուեստէն և առաւելապէս բնութենէն առնուած: Որովհետև Ե դարու յոյն (հարկաւ և հայ) մանկութիւնն ալ գիտէր՝ զոր օրինակ՝ «խեցի և կաւ ժողովել և տնկառն (տնակներ) շինել»¹, ինչպէս կ'ընեն ցայսօր մեր մանկտին: Այսպէս անոնց պախաձաձամքն ալ էին արձանիկներ, փորրիկ նմանութիւնը զէնքերու, նուագարանաց, արուեստի գործիներու, ծանօթ անասնոց, թռչնոց և այլն, ճիշդ ինչպէս ունէին նաև ուրիշ քաղաքակիրթ ազգերը²:

1. Ու. Թ. Թ. Ա., 563. — 2. Ու. Մ. Մ. Ա., 875.
— 3. Dar. Crependia.

Եփրեմի ընծայուած ճառից մէջ կը կարդանք՝ թէ ծնողք իրենց «սարտուցեալ» կամ խրտչած մանկանց կու տային «խաղաղիկ»՝ անօթս պատուականս»։ զոր եթէ բեկանէին, չէին ցաւեր, նպատակ ունեւ նալով անոնց հանդարտեցումը՝։

ԳԼՈՒԽ Բ

Խ Ա Լ Ա Ր Ի Կ Ք

Երբ տղայն կը յառաջանար դէպ ի մանկութիւն, իւր մատաղ հասակին հաճելի պախաճճամբ կը կորսնցնէին իրենց հրապոյրը, և նա կը սկսէր որոնել իսկական և աշխոյժ խաղեր։

Ասոնց ընդհանուր կոչումն ալ կը զբաւնենք Ոսկերբերանի հարուստ ու շքեղ Թարգմանութեան հետեւեալ տեղւոյն մէջ։ Մանր տղայք, կ'ըսէ, «յորժամ տեսանիցեմք թէ խալարկաց ցանկանան, աճապարեմք Թաքուցանեմք զխալարկիսն»¹։ Այդպէս կրկին անգամ ու զանազան հոլովներով զործածուած «խալարիկը», բաւական է համոզելու՝ թէ գրիչներէ աղաւաղուած բառ մը չէ, և կամ խանգարումը «խաղալիկ» ձևին։ Վերջինս կը Թարգմանէ յն. παλγυαυը²։ ուր խալարիկը կը համապատասխանէ ἀπαυαυαթին՝ Ոսկերբերանի բնագրին մէջ, որ ճշդիւ հայ բառին իմ տուած իմաստն ունի, և կ'ըսուի նաև անյատուկ ձևով մը՝ «մանկտոյ խաղ»³։

Այս կարգի զուարճութեանց կականարէ Մանկուհիներն՝ երբ կ'ըսէ. «Մանկունք ի գրտստեմ, և երգումնք ի բերանս»⁴, զոր չար սովորութեամբ մը կը խառնէին ամէն զործի մէջ, և որոյ դէմ կը բողոքէ բժմ. բաւաջա։ Ես կը համարիմ՝ որ ինչպէս Յունաց, նաև Հայոց քով աղջկունք ալ կը զուարճանային խալարիկներով, որոց միայն հայ պատանեկաց սեպհական մնալու

պատճառ մը չկար, լինելով յարմար և իզական սեռին։

Դ՛նանթ են մեզ բարեբախտաբար՝ գէթ անուամբ՝ մեր հայ խալարիկները, և բաւական թուով, որ կը բովանդակուին հետագայ վկայութեանց մէջ։

ա. Ոսկերբերանի Թարգմանիչը նոյն տեղւոյն մէջ՝ ուր կը յիշէ խալարիկը՝ կը շարունակէ իբր օրինակ անոնց, «կամ զգունդսն կամ զլիցս կամ զյոյզս» և այլն. (յն. «գի գունդն և այլ ախարիք մի՛ խափանեսցին ի կարեւորաց»)։

բ. Նոյն Թարգմանիչն ուրիշ տեղ մը. «Եթէ որդի ունէիր, և նա... ի լիցս և ի յոյզս և ի տապկոտութեան զեզերէր»⁵։ (յն. «զեզերէր ընդ այնտիկ... որ ի քոռայս զբաղուցուն»)։

գ. Նոյն Հօր՝ Մատթէի մեկնութեան Թարգմանիչը. «Իբրեւ զմանկտոյ խաղ համարին, և իբրև զանիս և իբրև զլիցս և զգունդս և զկողոփոցս հաշուին զամենայն»⁶ (նոյն ընդ յն.)։

դ. Նոյն Թարգմանիչը կ'ըսէ՝ թէ հարց իրենց որդւոց թոյլ կու տան «ընդ տապկոտութեան զբոսանիլ»⁷։

ե. Բարսղի վեցօրէից Թարգմանիչը. «կէսք ի լիցս ընթանան և կէսք ի տապկոտութեան»։ (յն. լու «կէսք ի քոռայս ընթանան»)։ Եւ յետ քանի մը տողի կը յարէ. «Ձի դե բնակաւոր կայ յայնտիկ՝ որ ի ներկածոյ և ի տարագիր ուշուսն (յն. ի նկարէն ոսկերսն) հարեալ իցեն»⁸։

զ. Եւսերեայ Եկեղ. պատմութեան Թարգմանիչը. «Մարգարէ տալայի և հոգի (յն. χυβος = յոյգ, քուռայ) խաղայ»⁹։

է. Աղեքսանդրի պատմութեան Թարգմանիչը. «տալով նմա ձակցութեան և կոռն, որով մակեդոնացւոց մանկունքն խաղան»¹⁰։

ը. Կային նաև շեղանկ, նարտ և ձառն թակ, զորս պիտի տեսնենք յետոյ։

Այդ առաջին եօթն վկայութեանց մէջ ունինք հայ հարազատ կոչումներ՝ հա-

1. Եփր. Գ, 194. — 2. Ոսկ. Թղթ. Բ, 539. — 3. Թար. Խ, 14. — 4. Ոսկ. Մար. Ա, 679. — 5. Մանր. 121. — 6. Ոսկ. Թղթ. Ա, 923. — 7. Ոսկ.

Մար. Ա, 679. — 8. Նոյն՝ Գ, 25. — 9. Վեցօր. 178. — 10. Եւս. Եկ. 387. — 11. Պատմ. Աղ. 54.

մաժայն յոյն բնագրին, ինչպէս նաեւ հայ թարգմանիչներէն ազատ յիշատակու թիւնը, զոր մեր նախնիք սովոր են ընել յաճախ՝ բնագրերնրը հայ բարբերուն մօտեցնելու համար, ինչպէս ցոյց տուած եմ այլուր¹։ Եւ երկու պարագային ալ իրաւունք կը ստանանք հետեցնելու՝ թէ այդ խաղերը, զոր թարգմանիչը պահեցին բնագրաց մէջ ու լրացուցին, արդէն բոլոր հին քաղաքակիրթ աշխարհին ծանօթ, ընտանի էին մեզ ալ, որ բազմապատիկ կապեր ունեցած ենք Յունաց հետ, որոց իշխանութեան ներքեւ էր Հայաստանի մէկ մասը Դ դարէն, և որոց ցով զաստիարակուած պիտի տեսնենք մեր մտաւորականներէն շատերը։ Այս բոլորը գրաւական են մեզ ընդմիջուելու՝ թէ յիշեալ խաղերը դիւրաւ պիտի հայանային, և յետոյ երթալով բազմանային, ինչպէս կ'երեւին մինչև մեր օրերը հայ գաւառաց մէջ, և զորս հաւաքեցին ու նկարագրեցին բանասէրք²։

Խալարիկները եթէ կը սկսէին մանկու թեան հետ, բոլորն ալ նոյն հասակին հետ չէին վերջանար։ Անոցմէ ոմանք կը շարունակէին կազմել նաեւ հայուն հասակին զօրանքը, ինչպէս վերոյիշեալ վկայութեանց մէջ կը նշմարուի։

Այժմ տեսնենք մեր հին աշխարհի ծանօթ խալարիկները մի առ մի, անոնց նկարագրութիւնն որոնելով յոյն կամ հռովմէական հնախօսութեանց մէջ, որ պիտի լրացնեն մեր հին մատենագրութեան թերրին։

Հ. Վ. ՀԱՅՏՈՒՆԻ

(Շարունակելի)



ԼԵՂՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅՏԵՐԸՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԱՌԱՔԵԼ ՍԻՆԵՑԵՑԻՈՑ ԱԳԱՄԳՐԻՔԻՆ ՄԷՋ

(ՏԳ. ՎԻՆԻԿԻ 1907)

Արեւակոյս. գործածուած է ուս հետեւեալ տան մէջ. Ի կոյս մօրէ նա ծնանի, և կոյս մարմնով յերկրի սնանի. աթեւակոյս զրով կնքի, և ի կոյս վիմէ յաւուցանի (էջ 181)։ Անշուշտ յն. 'Aθῆνα բառէն, որ է «Աստուածունի» իմաստով թեան, դուստր Արամազդայ»։

Ամար. «անշէջ, չմարող»։ Ձնա մեռուցեր և դու մեռար կրկին մահուամբ ի բոցն անմար (էջ 300)։

Անուշիմ. «անխելք, անմիտ»։ Ձանձրախորհորդ և անուշիմ և անհանձար ամենինին. երբ զքեզ խաբեց օձն ի ծառին, չասի «Դո՛ւ կեր որ ես ունիմ» (էջ 312)։

Գեթ. «վնաս, յանցանք»։ Եւ քեզ աւսեմ, ո՛ւ՜ խորագէտ, որ ուսուցեր զկինն տգէտ, թեպէտ յանցանք էր այդ և գեթ, բայց ո՛չ ի քէն, այլ ի չարէդ (էջ 93)։ Գործածական է նաեւ Տփղիսի բարբառին մէջ նոյն իմաստով։ Ասկէ կազմուած է գիրովոր «մեղապարտ, յանցաւոր», որ մէկ անգամ գործածուած է յետին զբրուածքի մը մէջ (տպ. Записки, 11, 75)։ «Որպէս վախեցար դու ի ձայնէ փողոյն իմոյ, որ չես ինձ վնասակար, նոյնպէս և ես զարհուրիմ քո ձայնէ փողոյն՝ որ կոչէ զիս զատաստան»։ զի գիթվոր եմ Աստուծոյ, սեւերես և պարտական»։ Մառ (անդ) այս բառը կը հանէ պրս. gid «վախկոտ» բառէ մը, որ չեմ գտներ Գէորդ զարի բառարանին մէջ և ասկէ զատ չի յարմարի իմաստով։

Դժպահակ. «անբարոյնի, դժուարմըրոնի»։ Յետոյ ի խաչ գալ Արարչին, այս՝ խորհրդոց է դժպահակ. բայց այս նմա է գիտելի՝ որ է բնութեամբ անեղ զոյակ (էջ 284)։ Կ'ուզէ ըսել թէ Արարչին խաչուելը մեր մտքին համար անըմ-

1. Զուր, 93-5, 229. — 2. Զեթ. ևն.